# Տ. ԱԲՐԱՀԱՄ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԿՐՏՉՅԱՆ



Ծնվել է 1961 թ. հունվարի 7-ին, Եղեգնաձորի շրջանի Ռինդ գյուղում:

1968—78 թթ. սովորել և ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը:

1980—82 թթ. ծառայել է խորհրդային բանակում:

Զորացրվելուց հետո ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1986 թ. փետրվարին, ձեռամբ Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1986 թ. դեկտեմբերին պաշտպանել է ավարտաճառ՝ «Սյունյաց մետրոպոլիտությունը Օրբելյանների իշխանության ժամանակ» թեմայով:

1987 թ. հունիսի 7-ին Մայր տաճարում, ձեռամբ Մայր Աթոռի ռիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

1986 թվականից աշխատում է «Էջմիածին» ամսագրի խմբագրությունում որպես քարտուղար:

1987—88 և 1988—89 ո.ւ. տարեշրջաններին դասավանդել է հոգևոր ճեմարանում «Հայ գրականություն» և «Վարք սրբոց» առարկաները:

Այժմ սովորում է նաև Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի երրորդ կուրսում.